ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.11.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Լ. Թազայան)

1.1 *ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված 13.11.2019թ.-ին տրամադրած համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:*

1.2 18.11.2019թ. կայացրած նիստում մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված)՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերին (տեխնիկական բնութագրերին) վերաբերող փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՆԻԿՕ-ՏԵԿ», «ՎԱԼՄԼ» և «Ա-2» ՍՊԸ-ների ներկայացված որակավորման փաստաթղթերի:

«ՆԻԿՕ-ՏԵԿ » **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին մասնավորապես.

1-ին չափաբաժին՝ **Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Կտրող սարք (բալգարկա)** ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը դաշտում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը. **Կտրող սարքի պատյանի տեսանելի հատվածում լազերային կամ դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող երկնիշ <<ՊՆ - 41-ից մինչև 90>> համարներ:**

2-րդ չափաբաժին՝ **Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Էլ. շաղափ (դռել)** ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ **Ծակող սարքի պատյանի տեսանելի հատվածում լազերային կամ դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող երկնիշ <<ՊՆ - 41-ից մինչև 80>> համարներ:**

8-րդ չափաբաժին՝ **Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 40 Կվտ)** ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ **ՊՆ ներկայացուցչի ներկայությամբ տեղում կատարել փորձարկում:**

9-րդ չափաբաժին՝ **Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 60Կվտ)** ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ **ՊՆ ներկայացուցչի ներկայությամբ տեղում կատարել փորձարկում:**

19-րդ չափաբաժին՝ **Ջրի պոմպեր (ԷՑՎ-4) ապրանքատեսակի մասով ներկայացված** տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ **Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001—2020թ >> համարներով:**

20-րդ չափաբաժին՝ **Ջրի պոմպեր (ԷՑՎ-6)** ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ **Շարժիչի և պոմպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001—2020թ >> համարներով:**

«Ա-2» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացվել են որակավորման փաստաթղթեր (հավելված 6, հավելված 6.1) ինչը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսվող փաստաթղթերին, ինչպես նաև սխալ է նշված ընթացակարգի ծածկագիրը և չափաբաժինների համարները:

Անհրաժեշտ է շտկել առկա անհամապատասխանությունները և ներկայացնել սույն ընթացակարգի հրավերով նախատեսվող փաստաթղթեր՝ (հավելված 3 և հավելված 3.1):

Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«ՎԱԼՄԼ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 3.1) ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին: Ստորև համեմատական կարգով ներկայացվում են հրավերի տեխնիկական բնութագրերով նախատեսված այն ցուցանիշները, որոնք չեն համապատասխանում դրան.

Ըստ ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի	Ըստ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի
14-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պումպեր (Կենտրոնախույս պումպ K50-32-125, 1.5K6)	
Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 12.5Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 20Մ, շարժիչի հզորությունը՝ 2.2Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պումպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001—2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 6.5Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 10Մ, շարժիչի հզորությունը՝ 1.1Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Չփաթեթավորված, առանց փորձարկման հավաստագրի: 2000թ. ոչ ցածր արտադրության, օգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան առանց գործարանային նշագրմամբ:
15-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պումպեր (Կենտրոնախույս պումպ K65-50-160, 2K6)	
Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 25Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 5.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պումպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001—2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 12,5Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 15Մ, շարժիչի հզորությունը՝ 2.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Չփաթեթավորված, առանց փորձարկման հավաստագրի: 2000թ. ոչ ցածր արտադրության, օգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան առանց գործարանային նշագրմամբ:
16-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պումպեր (Կենտրոնախույս պումպ K80-65-160, 3K9)	
Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 50Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 7.5Վվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պումպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001—2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 25Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 16Մ, շարժիչի հզորությունը՝ 3.5Կվտ, եռաֆազ 380Վ լարման, 50Հց հաճախականության: Չփաթեթավորված, առանց փորձարկման հավաստագրի: 2000թ. ոչ ցածր արտադրության, օգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան առանց գործարանային նշագրմամբ:
17-րդ չափաբաժին՝ Կենտրոնախույս պումպեր(Կենտրոնախույս պումպ K100-80-160, 4K12)	
Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 100Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 32Մ, շարժիչի հզորությունը՝ 15Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պումպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001—2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Կենտրոնախույս պումպ, արտադրողականությունը 50Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 16Մ, շարժիչի հզորությունը՝ 7.5Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Չփաթեթավորված, առանց փորձարկման հավաստագրի: 2000թ. ոչ ցածր արտադրության, օգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան առանց գործարանային նշագրմամբ:
21-րդ չափաբաժին՝ Ջրի պումպեր (ԷՑՎ-8)	
Խորքային պումպ ԷՑՎ-8-16-140: Արտադրողականությունը 16Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 140Մ, շարժիչի հզորությունը՝ 11Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Գործարանային փաթեթավորմամբ, փորձարկման հավաստագրով և մեկ տարվա երաշխիքով: Շարժիչի և պումպի վրա դաջման եղանակով պետք է մակնշված լինի հերթական չկրկնվող եռանիշ <<ՊՆ - 001—2020թ >> համարներով: 2018թ. ոչ ցածր արտադրության, չօգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան գործարանային նշագրմամբ:	Խորքային պումպ ԷՑՎ-8-16-55: Արտադրողականությունը 8Մ3/ժ, ջրի սյան բարձրությունը՝ 55Մ, շարժիչի հզորությունը՝ 5.5Կվտ, եռաֆազ 380վ լարման, 50Հց հաճախականության: Չփաթեթավորված, առանց փորձարկման հավաստագրի: 2000թ. ոչ ցածր արտադրության, օգտագործված: Շարժիչի և պումպի վրա վերոնշյալ պարամետրերի համապատասխան առանց գործարանային նշագրմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ 19.11.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով դրա մասին տեղեկացրեց «ՆԻԿՕ-ՏԵԿ», «ՎԱԼՄԼ» և «Ա-2» ՍՊԸ-ներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

25.11.2019թ. գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «ՎԱԼՄԼ», «ՆԻԿՕ-ՏԵԿ» և «Ա-2» ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում ներկայացվեցին շտկված փաստաթղթերը և ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը հանձնաժողովն արձանագրեց, որ «ՆԻԿՕ-ՏԵԿ» և «Ա-2» ՍՊԸ-ների կողմից շտկվել են ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները և որոշեց վերջիններիս կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված N 3.1) տեխնիկական բնութագրերը գնահատել բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի, մասնավորապես. հանձնաժողովն արձանագրեց, որ **«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի** կողմից ***14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով*** ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են անհամապատասխանություններ, տեխնիկական բնութագրերը շտկվել են մասամբ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-ին ենթակետը՝

գնահատող հանձնաժողովը որոշեց **«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Հանձնաժողովը որոշեց **«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի** տվյալները, գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.3 **«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ընթացակարգի ***14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով*** 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած և բավարար գնահատված մասնակցին՝ **«Ա/Ձ Անդրանիկ Գասպարյան» -ին:**

1.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած **«Ա/Ձ Անդրանիկ Գասպարյան» -ին** առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի)** 3-րդ կետով **նախատեսված փաստաթղթերը**:

1.5 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել **«Ա/Ձ Անդրանիկ Գասպարյան» -ի** կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ս. Սարգսյան

Գնահատող Թ.Ստեփանյան

Գնումները համակարգող Լ. Թազայան